

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պոլսոյ համար 8 ՄԷՃ.
՝ Գաւառաց 10 ՄԷՃ.
Վերականգնող և Պոլսոյ 4 ՄԷՃ.
՝ Գաւառաց 5 ՄԷՃ.
Իւրաքանչիւր թիւի գին 60 փր.
Յանուարի տոնը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլլայ:



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 51 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՏԱՐԵՄՈՒՏ

1874 տարին քանի մը ժամ ետ-
քը ներկայէն կը հրաժարի և կեր-
թայ կը խառնուի անցելոյն հետ,
բաժին թողլով մեզ տխուր կամ զը-
ւարթ, յաջող կամ ձախող յիշատակ-
ներ, և ապագայ կեդակարձ յոյս մը:
Թողած յիշատակներէն անոնք
որ ընդհանուր մարդկութեան կամ
անոր որ և է մէկ մասին կը պատկանին,
իրեն հասարակային կամ պատմա-
կան իրողութիւնք՝ հրապարակադրաց
ուշադրութեան նիւթ են, և այս
նկատմամբ մեք ալ՝ իբրեւ հրապա-
րակադիր՝ այդ յիշատակաց վրայ
գոնէ հարեանցի ակնարկ մը ձգե-
լու պարտաւոր կը համարինք զմեզ:

1874 տարին թէ և մեծամեծ
անցքերով բերրի տարի մը չէր, բայց
և այնպէս պատմութեան մէջ յիշա-
տակաց արժանի էջեր դրաւոյ քա-
նի մը կարեւոր անցքերէ թափուր չէ:

Ասոնց մէջ ամենէն նշանաւորը
կրնայ համարուիլ Սպանիական
յեղափոխութիւնը, որ յանուն
ազատութեան չորս հինգ տարիէ ի
վեր երկիրը քաղաքային պատերազ-
մի ասպարէզ ընկէ, և համազօր ու
համարին եղբարց արեամբ ողողե-
լէ ետեւ, վերջապէս դրօշակը ծալ-
լեց, և 18 ամեայ միապետի մ'առ-
ջեւ ծունդ դնելու հարկին տեղի տը-
ւաւ, չնորհիւ անդրալեւնայ կղերին:

Երկրորդն է Պաղէն մարաշախտին
դատաստանը, որ 1870 ի Բրուսո-
Գաղղիական պատերազմին մէջ Գաղ-
ղիական աղբիւն բաղդը, պատիւն
ու կեանքը պաշտպանելու պաշտօնն
ունեցող անձանց խաղաղած տխուր
դերերուն մանրամասն նկարագիրն էր,
և ինչպէս որ կ'աղտոտէր, գլխաւոր
դերասանապետին՝ Պաղէնի դատա-
պարտութեամբը վերջացաւ: Բայց
դատապարտեալը՝ չնորհիւ ճարտար
համակոհաց՝ իր արդէւնացէն փախ-
չելով աղաւթեց իր անձը, բայց ոչ
պատիւը:

Երրորդն է, Արմիմ կամին դա-
տաստանը, որ Պաղէնի դատաստա-
նէն ոչ նուազ հետաքրքրաշարժ և
միանգամայն ոչ նուազ խրատական
է: Այս երկրորդ դատաստանին մէջ
մէջ տեսնուեցաւ, թէ ճարտար քա-
ղաքագէտ մ'իր խորհուրդներն յա-
ռաջ տանելու և նպատակին հասնե-

լու համար ինչ խորամանկ հնարք-
ներ ի գործ կը դնէ, դիմացինը
խաբէլու կամ քնացնելու համար հը-
րապարակաւ ինչ յայտարարութիւն-
ներ կընէ և ի ծածուկ ինչ մեքե-
նայութիւններ կը նիւթէ: Տեսնուե-
ցաւ թէ պետական շահ մը կամ
փառասիրութիւն մը յաղեցնելու
համար ժողովրդաց անդորրութիւ-
նը, գոյքը, կեանքը ո՛րչափ չնչին
ու աննշան բաներ են կարգ մը
քաղաքագիտաց առջև, և թէ ի-
րաւունք, արդարութիւն, ազա-
տութիւն, քաղաքակրթութիւն, և
այլ ասոնց նման դեղեցիկ բառերն
ինչ պատիւ նշանակութիւն ունին
անոնց բերնին մէջ, և վերջապէս
թէ ժողովրդը կամ մարդկութիւնն
ինչ խեղճ խաղալի մ'է անոնց ձե-
ռաց մէջ:

Գալով Թուրքիոյ, օտար ազգաց
և տէրութեանց հետ յարաբերու-
թիւնները խիստ դժհասուցիչ վիճա-
կի մէջ են, իսկ ներքին վիճակը՝
թէ և խաղաղ, բայց առեւտրոց
նուազութեան և մանրամասն փոքր
Ասիոյ մէջ դժբաղդաբար տիրած սո-
վին պատճառաւ՝ ոչ այնչափ դժհա-
ցուցիչ:

Մաղթենք որ նոր տարին աւելի
զուարթ գէմբով ներկայանայ մեզ
և անցելոյն տխրութիւնը փարատէ:

Ազգային վիճակին՝ արդարը խո-
սելով վերջին ժամանակներս յուսա-
լից կերպարանք մ'առնուի սկսած է:

Անցեալ տարուան ողբալի անց-
քերուն հետեանքն եղող յուլման-
քըն ու կիրքերը մեծ մասամբ մա-
րած են Սրբաշուն Պատրիարք հօր
խոհական ջանից չնորհիւ: Կեդրոնա-
կան սնտուկին հին պարտքը, որ ազ-
գին անպատուութիւն բերող և վար-
չութեան ծանր հոգ պատճառող
կնճիւղ մ'էր, մաքրուեցաւ երկու վեհ-
սիրտ ազգայնոց տառաձեռնու-
թեան չնորհիւ: ազգային կանոնաւոր
տուրք հաստատելու և դատարարա-
կութեան մեծ և կենսական գործն
յառաջ տանելու համար վարչու-
թեան կողմէ ջանքեր կը տեսնուին:
Ազգային երեսփոխանական ժողովն,
որ ասկէց առաջ անկարգ և ապա-
դիւն վիճակի մը մէջ էր, նոր կանո-
նադրութեան չնորհիւ բարեկարգ
և արդիւնաւոր վիճակ մ'առացած
և աղբիւն կենսական խնդիրներով
զրադելու և զանոնք արագապէս
լուծելու գրից մէջ մտած է:

Այս քաջալերական իրողութիւն-
ներն յոյս կուտան մեզ թէ յառա-
ջիկայ տարին աւելի բեղմնաւոր կըլ-
լայ ազգային բարեկարգական և
յառաջդիմական գործերով, և ու-
նայն խօսքերու՝ օգտակար արդիւնք
կը յաջորդեն:

Հրադրոյս ներկայ դրեց վրայ հիմ-
նական փոփոխութիւն մ'ընելու,
այսինքն ամեն օր հրատարակելու
և թերթն ալ աւելի մեծցնելու ա-
ռաջարկութիւն եղած ըլլալով մեզ,
միջոցները խորհելու և պատրաս-
տելու ետեւէ ենք, և կը յուսանք
որ քիչ ժամանակէն կը յաջողինք
այս կարեւոր յառաջդիմութեամբ
ներկայանալ մեր արդոյ ընթերցո-
ղաց:

Առայժմ, մինչև որ այդ մեծ
փոփոխութիւնը կատարուի, ներկայ
գիրքով պիտի շարունակենք, նիւ-
թոց ընտրութեան աւելի հոգ տա-
նելով, և շարաթը մէկ կամ երկու
անգամ ալ քաղաքական տեսութիւն
մը հրատարակելով, որ վերջին ժա-
մանակներս քաղաքական կարեւոր
խնդրոց նուազութեան պատճառաւ
զանց եղած էր:

Այս տրամադրութեամբք պիտի
շարունակենք մեր խմբագրական
պաշտօնը, փոյթ ունենալով այսուհե-
տեւ ալ ընդ միշտ վայելել աղբիւն ող-
ջալիս և լուսամտ մասին համակ-
րութիւնը, որ մեր միակ նեցուկն ե-
ղած է քսան և չորս տարիէ ի վեր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 8 յունի.

Ելումովն նախարարին տեղեկա-
դիրն որ այսօր ազգային ժողովոյ ներ-
կայացաւ, 1876 ի համար ելումովն
հաշուեցայց մը կառավարիչ, ծախքն
2616 միլիոնի և հասցիւն ալ 2528
միլիոնի հասցնելով: Ելումովն նա-
խարարը կը յաւայ թէ ներկայ տը-
րոց բարեօրմամբ հասցիւններն 93
միլիոն կրնան տեւելու:

Պ. Տը Լարոսի նոր նախարարու-
թիւն մը կ'աղմկել յանձն չառնելով,
նախագահ մարաշախտը Պ. Տիւֆօրի
առաջարկեց:

Պաշտօնական օրագիրը կը ծանու-
ցանէ թէ հրաժարեալ նախարարք
իրենց պաշտօնը պիտի շարունակեն
մինչև որ նոր նախարարութիւն մը
կազմուի:

Նիւ-Եօրք 8 յունի.
Քանի մը նախագաց կառավա-
րիչք կը բողոքէն Լուիզիանայի նա-
հանգին մէջ վերջին օրերս եղած
ղինուորական միջամտութեան դէմ:
Վիէննա 8 յունի.
Պ. Օֆէնհէյսի հարցաքննութիւն-
նը կը շարունակի:

Փարիզ 1 յունի.
Միտում կայ կարծելու թէ Պրոյի
—Տըքազ նախարարութիւն մը կաղ-
մուելու աւելի հաւանականութիւն
կայ, որոյ ծրագիրն ամեն բան ներ-
կայ վիճակին մէջ պահել է:
Մաք—Մահոն մարաշախտ՝ պահ-
պանողականաց, կողմը հակեալ է
կըսուի:

Կառավարութիւնը Գաղղիոյ և
Անգղիոյ մէջ տեղը ծովու տակէն
կամուրջ մը շինելու վերաբերեալ
պայմանագրութիւնը կնքեց, և ըն-
կերութեան ալ հրաման եղաւ որ
գործի սկսի:

Փարիզ 9 յունի.
Մաք—Մահոն մարաշախտ երեկ
Պ. Տիւֆօրի հետ տեսակցելէ ետեւ
Օտիֆրէ Բասքիէ դուքսը կանչեց,
բայց նա ալ յանձն չառաւ նոր նա-
խարարութիւն մը կազմելու գործը:
Այսօր Պ. Տը Պրոյի դուքսը կանչեց,
կըկարծուի թէ Պ. Պրոյիէ, Յուրթուէ
և Տըքազէ բաղկացնուլ նոր նախարա-
րութիւն մը պիտի կազմուի:

Պորսային մէջ Պ. Մոյնի անունը
յառաջ կը դրուի:
Բումբէլի բաժինք 123 1/8:
Պարսէլոն 9 յունի.
Նոր թագաւորն հանդիսիւ ըն-
դունուեցաւ:

Փարիզ 10 յունի.
Պրոյի դուքսն յայտնեց թէ ան-
հնար է իրեն նոր նախարարութիւն
մը կազմել մինչև որ ազգային ժո-
ղովը սահմանադրական օրինաց վրայ
որոշում մը չընէ:
Տոն Ալֆոնս ջերմ համակրու-
թեամբ ընդունուեցաւ ի Պարսէլոն,
ուր քանի մը ժամ կենալէ ետեւ վա-
րան գնաց:

Պէրլին 9 յունի.
Ազգային ժողովն երեսփոխանաց
դրամական վարձատրութիւն մ'ընե-
լու առաջարկութիւնն ընդունեց:
Վաշինկթըն 9 յունի.
Նոր—Օրէանի մէջ Եփրատն դո-
րապետին Լուիզիանայի նահանգին
օրէնսդրական ժողովը զինու զօրու-
թեամբ կոխելը մեծ ցատում պատ-
ճառեց համայն Ամերիկայի մէջ, Եփ-
րատն մը ժողովն այս խնդրոյն վրայ
կրնայ ի նախագահէն տեղեկութիւն
խնդրելու որոշում տուաւ:

Լոնդոն 9 յունի.
Օտ. Բոնա. 44 3/8
Բոն. 1865 68 1/2—69
» 1869 55 1/2
» 1871 66
» 1872 85

» 1873 ՅՁ 4/2-3/4
Դուրս գրություններ 1
Դեղք բռն. 92 4/2-5/8
1/4 դրամ 9 դրամ 1/4
Բուժողական Գրասենյակ-Օրդերան 7 7/8
» Ֆարք Տղերական 8
Կրթության 40000 հոգի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքին Գերմանական
դեսպան Վսեմ Գ. Տը վերթէն շա-
բաթ օրը վէճ. Սուլթանին ներկա-
յանցով՝ Ուսէմպուրիի Մեծ Դ. քովն
կողմէ Արժանեաց կարգի մեծ ժա-
կետները մատուց Ն. Կ. վէճախառա-
ւորական:

Երեկ ալ Անդղիոյ գետապան ՎԷ-
սեմ: Սըր Հէնրի Էլիօթ վեհ. Սուէ-
թանին ներկայանալով, Վիքթորիա
թագուհւոյն ինքնագիր նամակը մա-
տոյց, որով Մեծին Բրիտանիոյ թա-
գուհին իր որդւոյն՝ Էտիսկուսերկի
դուքսին՝ արօւ զաւակ մը ծնած ԸԼ-
յայր կը ծանուցանէր:

Բ. Պուռը գաւառացի կուսակա-
ներուն հրամանագիրը զրկեց ծանու-
ցաներով թէ Պարսից և Տաճկաց մէջ
ամուսնութիւնն արգելիւալ է, և թէ
Օսմանեան հպատակ Տաճիկ մ'այս
արգելքին հակառակ վարուած Ժա-
մանակ զատաստանի և պատժոյ
պիտի ենթարկի, Հրամանագիրը կա-
ւելցնէ սակայն թէ Օսմանեան հպա-
տակ տաճիկուհի մ'ենթէ Պարսիկ մը
հետ ամուսնացած լլլայ, ծնած զաւ-
լունքն Օսմանեան հպատակ ճանչուե-
լով՝ արցն և զինուորագրութեան
պիտի ենթարկին :

Թունա լրագիրը կը ծանուցանէ թէ՛ Ռուսճուգի բանտերուն մէջ 800 էն աւելի բանտարկեալք կան, շատերը լոկ կտակածով կամ ամբաստանութեամբ, և Ռուսճուգի պատժական տտեանն ալ իր ամեն փութով թողնուածամբ չլընար հասնիլ այսչափ բազմութեան զատատանը տեսնելու :

Այս պատճառաւ գտառին կուսակալը քսնի մը յանձնաժողով անւաներ է նախապատրաստական քնննութեանց համար, որպէս զի պատժական ատենին դարձր դիւրանայ:

Շիրքէթի խայրիէի շոգեհնաւները՝
վաղուրնէս սկսեալ՝ առաւօտեան ա-
ռաջին ուղևորութիւնը կէս ժամ
կանուխ պիտի սկսին :

	ԿՈՍՏԱՆԴՆՈՒԼՆԻՊՈԼՍ	
	ԷՍԶԱՄԲԸ ՈՒՄՈՒՄԻՆԷ	
30	դեկտ. երկուշաբթի իրկուսն	47 21
31	» երկըշաբթի առաւօտ բացուեցաւ	47 23
	կէս օր	47 18
	կ. Պօլսիս 30 դեկտ.	
Սօսիէթէ Ժէնէրալի բաժինը Անդր. իր.	7 32	
« Փոխաւանկութեան »	5 16	
կ. Պօլսոյ Պանքային »	6. 6	
Իրէտի Ժէնէրալ »	41 14	
Իրէտի Օսթրո—Րիւ բք կրկաթ աղանց հին	Յր. 123 1/2	
Փոխ. 1863	» 326	
» 1865	» 7	
» 1869	» 279 3/4	
« 1872	» 83 1/2	
» 1873	» 267 1/2	
Երամուէլ Օստ. իր	3 90	
	ԲՆԱՍՏ ԳՆԱՐԱՅ	
	30 ԴԵԿՏԵՄԲԵՐ	
Անդր. իրա զաւրոյ	469.32	
Եւրօլէոն ոսկի »	87 24	
Իմբէնիալ Ռուս »	89 5	
Գլըրէիս »	54. 25	
Հինգ ֆրանկ »	—	
Հնգիւս »	104 30	
Պղինձ »	429	

Ա. Զ. Ա. ՅԻՆ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԶԳԱՅԻՆ ԿՈՐՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Պէշիրեան Աւետիս անունն փաստաբանը որ ի 1½ փետրուար 1872 արինաւորապէս ամուսնացեր էր ի

մայրաքաղաքիս և զաւակ մ'ալ ու-
նեցեր, կը յանդգնէի համբաւեալ
զանձնէ առաջի Ազգ. Կրօնական Ժո-
ղովոյ, Թէ այս անգամ կրկին պատկ-
ուած լինի յ30 յուլիս 1874 ի ձեռն
ծանուցեալ Զինկիկրեան Յակովբի՝
Ռօստոյթօցի դերձակ Համբարձումի
Գայիանէ անուն աղջկան հետ՝ ի կեն-
դանութեան անդ. հարադաս կնոջ
Իւրջ :

կրօն. ժողովքն՝ որ արգէն Ձիլին-
կիրեան Յակոբի ձեացուցած սրա-
կաց խարէական և անվաւեր լինելն
հրատարակած էր, այլու առթիւ ի
գործ դնելով այն վճիռը՝ դատա-
պարտած է այս կարծեցեալ ամուս-
նութիւնը, և յիշեալ Պէշիբեան Ա-
ւետիս փաստաբանին և Ռօտօօթի
Էրեճակ Համբարձումի Գայիանէ ա-
նուն աղբիւրն առաջարկած լինելով՝
որ բաժնուին իրարմէ, և նկատելով
թէ յամուռ կը մնան նոքա իր այն-
քան խրատուցն և յորդորանոց
հակառակ, ըստ օրինի Հայաստան-
եայց եկեղեցւոյ բանադրանաց տակ
ձգած է դանձոք :

կրօն . Ժողովմբ որոշեց շրջաբերական ուղղելով առ ամենայն եկեղեցիս մայրաքաղաքիս՝ պարտաւորել բոլոր քարոզիչներն , որ յառաջիկայ կիրակէ օր զայս յառնեն Ս . Եկեղեցւոյ զեկուցանեն հաւատացեցող , և թէ երկուքն ալ Սուրբ եկեղեցւոյ հաղորդակցութենէն մերժուած ու արտաքսուած և շնորհաց մատակարարութենէն զրկուած են , և ոչ ոք յեկեղեցական պաշտօնէից հայտատանեաց իբրև օրհնաբեր պիտի մտնէ երբէք ընդ սեամս տանց նոցա : Ս . յապէս վերտի մնան երկուքն նոքա , մինչև որ լլջալով դադարին յայօրենս կենակցութենէն , և իրարմէ բաժնուելով Ս . Եկեղեցւոյս օրինաց հնազանդութեան վերադառնան :

Տուեալ ի Դիւանէ Ազգ. Կրօնա-
կան Ժողովոյ ի հրատարակութիւն
յամենայն ազգային լրագիրս մայ-
րաքաղաքիս :

27 Դեկտեմբեր 1874 (կնիք)

Կրօնական ժողովոյ այս տնօրէնութիւնն ինչպէս յայտնի կը տեսնուի՝ հօգեւոր պատիժ մ'է ամուսնութեան սուրբ և անքակեալի կապը խզող և կրկնամուսնութեան դիմադնելու համար, որոց թիւը դժուարողաբար օր քան զօր շատնալու վրայ է աղդիս մէջ՝ ի վնաս կրօնի և բնկերութեան :

Եթէ չենք սխալիր, վերջին երկու երեք տարիներու մէջ տասնէն աւելի անձինք այդ ապօրինութեան դիմած են: Բայց հոս խնդիր մը կ'ըլլնէ մեր առջև: Ինչո՞ւ համար արդեօք անոնց խօսքը չկայ, և միայն մէկ հատին շրայ եկեղեցւոյ զէնքը դարձած եւ արժան դատել է կրօնական ժողովը: Միթէ միւսները կըրկնամուսնութեամբ առած երկրորդ կիներնին թողած և ապօրէն կենակցութենէ դադարած են. կամ թէ Կրօնական ժողովը միւսներունը ներքին գտած և վերոյիշեալը միայն գտաապարտութեան արժանի դատած է:

Արդ-եօք քիչ մը հիննալով կամ տարի անցնելով ապօրինութիւնը օրինաւորութեան կը փոխուի . կամ թէ նախորդ կրօնական ժողովոյ օրով տեղի ունեցած կրկնամսնութեանց վրայ ներկայ կրօնական ժողովն՝ իբրաւատութիւն չունի՝—Այս կէտերը՝ որ հասարակաց տարախուսիս և զայն թակուլութեան առիթ կրնան ըլլայլ բացատրութեան կարօտ են , և սիրելի է մեզ յուսալ որ կրօնական

պատկանելի ժողովի իր անհատու-
թիւնն արդարացնելու և խիզճիւն
անդորրելու համար կը փութայ այս
բայտարութիւնը տալ հասարակու-
թեան :

Պաշտօնական ծանուցումը կրել է
թիվ ԷՍԷ ՌԲ յեկեղեցական պաշտօնէից
Հայաստանեայց իբրեւ օրհնարեւր պի-
տի մանէ երբէք ընդ սեւամո տանց
նոցա, մինչև որ զղջալով դադարին
յապօրէն կենսիցութենէն, և իրար-
մէ բաժնուելով Ս. Եկեղեցւոյս օրի-
նաց հնադանդութեան վերադառ-
նան» :

Շատ լաւ: Բայց կը ներէ՞ մեզ կը-
րօնական ժողովը քանինքը ցոյց տալ
յականէ յանուանէ, որք կրկնամուս-
նութեամբ մեղանշած, դատապարտ-
ւած, մինչև այսօր այօրէն կենտկ-
ցութիւնը կը շարունակեն, բայց և
այնպէս եկեղեցւոյ խորհրդօց մաս-
տկարարութեան կընդունուին, և
եկեղեցւոյ պաշտօնեայք ալ իբրեւ
օրհնացել անխտիր կը յաճախեն ա-
նոնց տուները:

Նկեղեցուց օրէնքը հաւատար է
ամենաւն համար և խտիր չվերցնելը:
Ուտտի եկեղեցական իշխանութեան
այ անհրաժեշտ պարտականութիւնն
է հաւատարապէս և անխտիր դուր-
ժադրել այդ օրէնքն՝ առանց որ և
է աշուուրութեան :

Կը յուսանք որ կրօնական պատկառելի ժողովը լրջաբար նկատողութեան առնելով մեր այս արդար գիտողութիւնները, չհարկադրեն մեզ վերադառնալով այս կարեւոր և փառելի խնդրոյն վրայ:

• • • Լրացրապետ.

Անցեալները ձեր պատուական
լրագրոյն միջոցաւ թիւ 1611 հըրա-
տարակած Թրանսիլւանական Հայոց
յոդուածոյն համար իմ ջերմ շնոր-
հակալութիւնս յայտնելով, կ'համար-
ձակիմ նոյնը չարունակելէ վտահ ըւ-
լալով մեր ազգին այս կերպ յոդ-
ուածներու ունեցած համակրու-
թեանը:

Զեր ամերիկացի
Գ. Յոփսթերն

16/28 դեկտ. 1874 Պրաշով
(Թրանսիլվանիայ)

Ըստ ՈւՆԵՍԿ՝ վիթխեր Գերմանացի արագիլ հեշտաւոր աշխարհագրի մը խտրելի, չլայող ամենաախրելի զբաղմունքը, վաճառականութիւն ու շահագրտութիւնն է, որն որ զինքը աշխարհքիս չորս կողմը բերած ցրտած է, և առդին անդին իր սողգայունթիւնան հոգին տածելով, զինքը սնուցած ու բազմացուցած է : Ան երեւելի աշխարհագէտին խտրել կրնայ ըստ այժմեան վիճակի ազգիս, մանաւանդ աս կողմերուն համար, ստույգ համարութիւն է իր շայող նկատմամբ գրած ամեն խորհրդածութիւնները, ինչպէս ուրիշ ամեն Գերմանացուց մեր ազգին վրայ գրածները, միշտ և ամեն երեք ճշգրիտ չերեւանս Արդ, նախ Անի քաղաքն, և ետք՝ ալ Նիկիկիւայն՝ աս կողմերը գաղթող մեր ազգը, որ 25000 էն աւելի է, բուն սարակինոտաց և այլ բարբարոս ազգաց աշխարհուէր արշաւանքներէն սրտաճառած, ուսկից ետքը իրենք զիրենք վաճառականութեան ու շահագրտութեան ալ տուած են, իրենց ընկի հին հայրենիքի երկրէն հեռուսալին ետև : Խրքս ալ հոս տեղաց ամենն է երևելի հարուստ վաճառականներն հայերն են, ինչպէս չորսնախա ալ, հին տտենները մենախուսմբ քաղմութիւն մեր ազգին մէջն գաղթած կերևոյ : Ասիկա ակնյայտնի կերևոյ նաև այն հայերէն հին աշխարհագրութեան (1600) շղաճախի տպուած ու գերեւցիկ հայ գրերով վիրադրուած աշխատակէն, որն որ «Սամուրի վարի» մեր ազգային թանգարանին մէջ պահուած է : Ուսկից կերևոյ թէ մեր ազգը շղաճախ

Նաև ազգային դպրոց ու ժամանունն ան
ունեցած է :

Գրանշարով այժմ մեր թրանսիլվանիայ ազգային դպրոցներուն, որոնց վրայ սա անդամ ի մասնաւորի խօսիլ կողենք, շատ նշաններէ յայտնի կերևայ թէ հայերէն լեզուի մշակութեան համար, իւր արժանիքը հայապարտաբար մէջ, ժամանակաւ (մինչև 1848), թէ ուսուցիչ ու թէ առանձինն դպրատուններն գտնուած են, և թէ զխաւորաբար մեր ազգային դաւառական լեզուն մշակելու մեծ ջանք ու մտադրութիւն ըլլուած է, մասնաւոր կցիսարեթուայօրիս վեներտական մեծաբայ վարդապետաց ձեռքով, բայց խալիկերին՝ մասնաւոր նոյն տառնուան հընարքներէն ու բանաստեղծութիւններէն զբաւուած, մաքսած՝ ու ետքը յոգնած ետ քաղուելու ստիպուած են, վարձու տալով իրենց այն գեղեցիկ վանատունը շինված ըլլաւ հունգարացի ազգային կամաւոր զինուորացը ձեռք, ուր միանգամայն նոյն զինուորաց զիւստատուն եղած է այն հոյակապ վանատունը, որուն բարձր դռանը վրայ հայերէն Մեսրոպեան նշանադիրները դեռ կը գտնուին թէ ինչ վախճանաւ շինուած է նոյն մեծակաւոյց շէնքը, և ինչ արտասուելի վիճակի մէջ այժմ ինկած կը մնայ, իր նպատակին հասնելու համար. սակայն և այնպէս հայ ժողովուրդը դեռ անմուռաց կը լինէ իր Բաթիկ Ունգար, ու Աւստրիայ պը, այն է վ. Վ. Անտոնիոսն ու վ. Հ. Մովսէսը կամ Ամբրոսիոս, այն արդիւնաշատ ու ազգասէր վերապատեւելի հարց անունները, կը յարգէ իրենց ազգային հոգին ու եռանդը, կը գովէ մեր մանկտոյն մշակութեանը համար ցուցցած ջանքերին յիշելով, և դաւանելով ինքեմ կը բողբէ նոյն ատենուան խալիկ եպիսկոպոսն մը իրենց դէմ յարուցած հարածանքին դէմ, որ շուտի թոռականտային ձեռքով, նոյն գործունեաց ու ազգային անձինքը ետ քաղուելու ըստիպուած են: Ո՞ր տայր թէ մեր ազգը նա այնպիսի գործունեաց ու հայրենասիր եկեղեցականներն նորէն նշուաւ ինչ, ու հայերէն դաւառական լեզուն նորէն ծագկեցնէին, որ քառասուն և ութին ի վեր նորասերունդ հայ տղոց բերանը խալաւ ալ անհետ եղած է, ու մեր աղաւաղած ծէսերն իրենց առջի պոյծառութեանը մէջ տեսնէինք: Ո՞ր տայր թէ նորէն հայր վ. հարց իրենց ազգային դպրոցները շարունակելու քաջանալին ու մեր տղային տղոց բերանը ան մանր սիրուն և ընտանի ոտանաւոր խօսքերն լսուէին, որոցմէ քանի մը կտոր իբր յեւտին մնացորդ նոյն ժամանակուան հիւսնայ չափահասակ մարդոց բերանը դեռ կը յեղիդեղեն: Իրարու հետ կատակ ըրած ուրախութեան ու կերտխման ժամանակ, իբրեւ յիշատակ նոյն տառնուան հայրական ոգւոյն մշակութեան: Մենք այս կերպ ոտանաւորներէն քանի մը կը տար տղոց բերանը լսելով, անմիջապէս՝ ի գիր առինք, ինչպէս սա հետեւեալ, զորն որ Այրվիլի կազմէն եկող հայ մը՝ իրեն հայադէմ տարծներալու ժամանակնեղի արտասանեց, կատակի մը ժամանակ.

« Զուկը մուկը դիր պտուկը »

«Ես կեփեմ, դուն կուտես».

Դարձեալ նոյն կողմերէն դարձող գա-
ցող աշակերտ մը տես ինչ գեղեցիկ ու
տաճանաւոր մը մեղի տարձենալով զրուցեց
որն որ աճեալու յոյն Վ. Հարց ձեռքին
յօրինակած կերպով, թէ՛ն. վանկերը մա-
մանախաւ ողտոն բերանը քիչ մը պլլալ-
լած ու խախտած ըլլան ։

ԴՊՐՈՅ ԳԱՅՐԸ ԱՇԱԿԵՐՏԸ

Էս ալ մանուկ երբեմն էի
 Լեյժմ առոյթ ու պատանի,
 Սոյվիկ կարդալ, հաշուել գրեւ,
 Մօրս գրիկը ալ չեմ հանգչէր,
 Տունը մնալ ո՛չ չեմ սիրեր ։
 Երբ դպրոցին ժամն դարնէ
 Գիրքոյկս թեւեւս, մատիտն աչիս
 Կամ պատրաստ կազմ առաջիս
 Որ ինտուել չատ երկարել
 Ժամավաճառ չեմ գուր լինել ։
 Իսկ զպրոցին մէջն որ լինիմ
 Միտքս ու իս լուռ մտախառն

Վ. Ռ. ԹԱԻԱՆ